№ 33 Մարտի 6 (18) 1879 Մարտի 6 (18) № 33

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքագլխի ընտրութիւն։—Ներքին տեսութիւն։ Նամակ Երևանից։ Նամակ Դահարլից։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Բուլգարիա։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Մինչև այժմ, ինչպէս մեր ընթերցողը կը տեսնի ներկայ համարի ներքին լուրերից, Թիֆլիսի քաղաքագլուխը դեռ ընտրված չէ։

Ի՞նչ է այն զարմանալի երեւոյթի պատճառը, որ Թիֆլիսի պէս մի քաղաքում մարդ չէ գտնվում, որին մեր Դուման արժանի համարէր ընդունել քաղաքագլխի պաշտօնը։

Մենք կարծում ենք որ մարդիկ կան մեր քաղաքում, գլուխներ կան մեր հասարակութեան մէջ, բայց եթէ մեր ձայնաւորները չեն հասնում իրանց ընտրութեան մէջ որոշ հետևանքի, դա այն պատճառով է, որ նրանք մի իդէալ են որոնում և չը գիտեն որտեղ, հասարակութեան ի՞նչ դասակարգում, մասնագիտութեան որ ճիւղի մէջ գտնեն իրանց իդէալը....

Այսպէս մեր ձայնաւորները դեռ իրանք ճշգութեամբ որոշած չեն, թէ ինչ տեսակ քաղաքագլուխ են ցանկանում, ի՞նչ յատկութիւնների տէր մարդ են կամենում տեսնել այդ հասարակական պաշտօնի մէջ։

Մեն հասարակութեան մէջ հասարակական քաղաքային, թէ այլ ընտրողական պաշտօնների համար մարդիկ առաջուց պատրաստվում են, իսկ մեզանում այդ տեսակ պաշտօնների համար ոչ ոք երբէք չէ պատրաստվում։ Երբ որ հարկաւոր է լինում ընտրել,—ոչ ոք չը գիտէ թէ ում ընտրէ, ում տայ իր ընտրողական քուէն....

Մինը առաջարկում է մի զինուորականին որպէս քաղաքագլուխ, բայց ինչ յարաբերութիւն կայ զինուորական ծառայութեան, քաղաքային տնտեսութեան և քաղաքային վարչութեան մէջ,—այդ ոչ առաջարկողը, ոչ էլ մընացած ընտրողները բացատրել չեն կարող։ Երկրորդը առաջարկում է պետական քաղաքական ծառայութեան մի պաշտօնեային, դարձեալ ոչ ոք չէ կարող ապացուցանել որ պետական լաւ պաշտօնեան կարող է լաւ քաղաքագլուխ դառնալ։ Երրորդը խորհուրդ է տալիս ընտրել քաղաքագլխի պաշտօնի համար ձկնորսութեան մի կապալառուին, առանց բացատրել կարողանալու որ ձկնորսութեան և Թիֆլիսի փողոցների վրա գտնվող բազմաթիւ ճահիճներից ձուկ որսալու մէջ սերտ կապ կայ։ Չորրորդը առաջարկում է մի լրագրի նախկին խմբագրին, առանց որ և է ապացոյցներ բերելու թէ առաջարկվածը իր հրատարակած լրագրի մէջ որ և է ընդունակութիւն է ցոյց տուել դէպի քաղաքային հարցերի առողջ քննադատութիւնը, իր լրագրական գործունէութեամբ որ և է օգուտ է բերել քաղաքային տնտեսական խնդիրների օգտաւէտ կերպով վճռելուն։ Հինգերորդը առաջարկում է հացի կապալառուին, վեցերորդը հաշտարար դատաւորին, եօթերորդը մի բժշկին և այլն և այլն։

Մենք չենք մեղադրում ձայնաւորներին, մենք խոստովանվում ենք որ նրանց դրութիւնը դժուար է, որովհետև ամբողջ քաղաքում չը կայ մի մարդ անգամ, որ ուրիշ երկիրների պէս, առաջուց պատրաստվէր, իր գործունէութեամբ ինքն իրան որոշէր քաղաքային գործունէութեան համար։

Այդ պատճառով էլ մենք առաջարկեցինք ուշադրութիւն դարձնել մի մասնագիտութեան վրա, որ քիչ թէ շատ մօտ է քաղաքագլխի կոչմանը և գործունէութեան ձևին։

Չեզ հարկաւոր է մի տնտես, ասացինք մենք, վեր առէք, ուրեմն, մի գործնական, հասկացող տնտես, որ մի և նոյն ժամանակ միացնում է այդ յատկութեան հետ եռանդ և ազնուութիւն։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

28 փետրվարի

Այժմ երբ ամեն տեղ հայերը զգալով ուսման և գիտութեան պահանջը, հիմնում են ամեն անկիւնում դպրոցներ հայ սերնդի ապագայ կրթութեան համար, Երևանի նահանգում մի տխուր և ցաւալի պատկեր ենք տեսնում։ Հարիւրաւոր գիւղեր խրված են խորին տգիտութեան մէջ և ոչ ոք չէ մտածում այդ տեղերում ուսման և գիտութեան լոյսը տարածելու։ Հայ գիւղացին սիրում և յարգում է ուսումը, նա պատրաստ է իր վերջին կօպէկը զոհել իր զաւակի կրթութեան համար, բայց չը կայ մի առաջնորդ, մի անձն, որը իրագործէր հայ գիւղացու արտայայտած բոլոր ազնիւ նպատակները և ձգտումները։ Ում վրա է ընկնում այդ պարտքը, ո՞վ պէտք է կատարի այդ դերը, անկասկած մենք կը պատասխանենք, թեմական տեսուչը։ Եթէ Էչմիածնի հոգևոր կառավարութեանը հաճելի է, որ Երևանի թեմական տեսչութիւնը դարձեալ մնայ ներկայ թեմական տեսուչ հայր Այվազեանի ձեռքում և սա մի և նոյն ժամանակ ուսուցիչ Երևանի պրոգիմնազիայում, մենք հաստատ կարող ենք ասել որ տգիտութեան բարձր խաւարը դեռ շատ տարիներ կը ծածկվի հայ սերնդի մըտաւոր զարգացման վրա։ Բուն Հայաստանում, Արարատեան դաշտի վրա փռված բազմաթիւ գիւղերի ոչ մէկի մէջ չէ կարելի գտնել մի դպրոց, փոքր ի շատէ եւրոպականի ձև տուած։ Ինչ է այդ տխուր երևոյթի պատճառը. պատասխանը շատ պարզ է. թեմական տեսուչը ուսուցչի պաշտօն է վարում, իսկ թեմը բերանը հովին տուած նայում է։ Մենք զարմանում ենք թէ ինչու պէտք է հոգևորականի վրա բարձել այդ երկու ծանր պաշտօնները։ Փորձը ցոյց տուեց որ հոգևոր կառավարութեան այդ կարգադրութիւնը, որ ահա չորս տարուց աւելի է ոչ մի արդիւնաւոր վաստակ չը բերեց, այդպէս պէտք է լինէր այլապէս անկարելի էր։ Միակ միջոց, որով կարելի կը լինի Երևանի շրջակայ գիւղերում ուսումը և դաստիարակութիւնը տարածել, արժանաւոր և գործունեայ թեմական տեսուչն է։ Մենք ոչինչ չունենք ասելու ներկայ տեսուչ հայր Այվազեանի անձնաւորութեան դէմ. ընտրութիւնը վատ չէ, եթէ նրան ազատ կացուցանեն ուսուցչական պաշտօնից, նշանակեն ռոճիկ և ճանապարհածախս։ Նրան մենք ճանաչում ենք իբրև բաւական ընդունակ և յարմարաւոր անձն այդ կոչման մէջ, մանաւանդ որպէս հոգևորական նրա ձայնը աւելի ազդու է գիւղական ամբոխի վրա։ Ամեն մի գիւղում հիմնել դպրոց, առ այժմ այդ անհնար է։ Այն գիւղերը որոնք բազմամարդ են, ահա այդտեղ պէտք է լինեն դպրոցներ, որտեղ կը յաճախեն և մերձակայ գիւղերի աշակերտները։ Գիւղերը Գառնիբասարի մահալում համարեա թէ մէկ մէկի հետ կպած են. այդ հանգամանքը աւելի կը հեշտացնէ աշակերտների մի գիւղից միւսը յաճախելը։ Ճանապարհորդը Երևանից Նախիջևանի գծի վրա անցնում է մի շատ գեղեցիկ հովիտով. եթէ աշխատենք հայ գիւղացու խըրճիթի մէջ ներս թափանցել ուսման և լուսաւորութեան շառաւիղը, այն ժամանակ ես վստահանում եմ ասել մի քանի տասնեակ տարիներից յետոյ կարելի կը լինի Գառնիբասարի նահանգում մի գեղեցիկ Շվեյցարիա ստեղծել։ Թէ ինչ միջոցով կարելի է այդ ցանկալի նպատակին հասնել, դրա համար թող ներվի ինձ վեհափառ Հայրապետի ուշադրութիւնը դարձնել այդ հարցի վրա։ Ճշմարտութիւնը պահանջում է ինձ ասել, որ ներկայ Կաթողիկոսի օրով ամեն անկիւններում դպրոցներ երևացին, բայց Գառնիբասարի մահալը արժանի չեղաւ այդ բաղդին։ Ուրեմն վեհափառ Կաթողիկոսի վրա է մնում վերը յիշած արժանաւոր և գործունեայ տեսչի որոնելը, իսկ մեզ առհասարակ հայերիս պարտքն է ամեն կերպ օգնել և ջերմ պաշտպաններ հանդիսանալ մեր ամեն ուսումնարանական հարցերի մէջ։ «Արարատեան» և այլ ընկերութիւնների համար մենք, Ռուսաստանի հայերը նիւթական նպաստ ենք հասցնում, յիշենք որ մեր քթի տակ գտնվող ժողովուրդը կատարեալ տգիտութեան մէջ է։

Ա. Եր-

ՆԱՄԱԿ ԴԱՀԱՐԼԻՑ

26 փետրվարի

Այս գիւղի դպրոցը, որ թէև հազարաւոր խոչնդոտների հանդիպելուց զկնի, բոլորովին անյոյս դրութեան մէջ պատրաստում էր իր վերջին շունչը փչել ի նախատինք Դահարլիի հասարակութեան, բայց այսօր Ալէքսանդրապօլի վիճակաւոր Գէորգ վարդապետ Սուրենեանցի շնորհիւ վերականգնեցաւ իր մեռած դրութիւնից, և յուսով ենք որ այսուհետև անընդհատ կը շարունակվի, եթէ գերապատիւ հայրը ժամանակ առ ժամանակ ուշադրութիւն կը դարձնէ այդ դպրոցի վրա, որ ոչ միայն այդ գիւղին, այլ շրջակայ գիւղերին ևս շատ օգուտ կը տայ։—Գերապատիւ հայրը մի համառօտ ատենաբանութեամբ հասկացրեց ժողովրդին դաստիարակութեան նշանակութիւնը։—Ես, որովհետև ներկայ էի գերապատիւ հօր ատենաբանութեան, պէտք է ճշմարիտը խոստովանեմ, որ շատ լաւ տպաւորութիւն թողեց գիւղացիների վրա։ Այս բանը կարելի է եզրակացնել նորանից, որ գիւղացիք գերապատիւ յաջորդի ուսումնարանի վերաբերեալ առաջարկութիւնները բոլորը ուրախութեամբ կատարեցին. օրինաւոր ստորագրութեամբ խոստացան ամեն տարի նուիրել դպրոցին 50-ական ռուբլի, 10 սոմար ցորեն էլ խոստացան կալին տալ։ Հայր սուրբը հոգաբարձուներ և վարժապետ կարգեց և վերջապէս ամեն բան կարգի կանոնի տակ դրեց, այնպէս որ կարելի է յուսալ որ այդ դպրոցն էլ մըտաւ ապահով դրութեան մէջ։ Դպրոցը այժմ պատրաստի ունի մօտաւորապէս 200 ռուբլի, իւրաքանչիւր տարի քաղաքի Դմենափրկիչ Աւետարանի արդիւնքից ստանում է 120 ռուբլի, աշակերտներից առ նուազը թոշակադրամ գոյանում է տարին 200 ռուբլի, ուրեմն ամենայն տարի դպրոցը անխափան եկամուտ կունենայ համարեայ 400 ռուբլի, բացի պատրաստի գումարից, որով մի գիւղի ծխական դպրոց կառավարելը կարծեմ շատ հեշտ է, եթէ պ. պ. հոգաբարձուները բարեխղճաբար կատարեն իրանց պաշտօնը։—Հայր սուրբի հետ այս տեղը բոլոր կարգադրութիւնները վերջացնելուց յետոյ, միասին գնացինք Խլի-Ղարաքիլիսա։ Այս տեղ զանգակներով ժողովուրդը հրաւիրեցին եկեղեցին։ Հայր սուրբը այստեղ էլ բացատրեց ուսումնարանների նշանակութիւնը, ծխական դպրոցը, որ երկար ժամանակ էր դուռը փակ, կարգաւորեց, ուսուցիչ նշանակեց և մի քանի հասկացող հոգաբարձուներին յանձնեց։ Այստեղ թէև ոչինչ չը նուիրեցին դպրոցին, բայց հաստատուն ստորագրութեամբ խոստացան ամեն տարի տալ 150 ռուբլի։ Այժմ մեր խորին շնորհակալութիւնը գերապատիւ յաջորդին յայտնելուց զկնի, աւելորդ չենք համարում ծանօթացնել ընթերցողին յիշեալ Խլի-Ղարաքիլիսայի հետ։

Խլի-Ղարաքիլիսան, որ շատ մօտ է Ալէք-

սանդրապոլին, բաղկացած է մօտաւորապէս 250 տուն լուսաւորչական և 100 տուն կաթոլիկ հայերից, իր շրջակայքում գտնված մանր ու բաղմաթիւ գիւղերից առաջինն է թէ բնակիչների շատութեամբ, թէ հարստութեամբ, թէ հարբեցողութեամբ, թէ գիւղական բուն կոպտութեամբ և թէ կուսակրութեամբ...և այլն։ Այս գիւղում կայ երեք քահանայ. ա. մի պարկեշտ և բաւական ուսումնասէր անձն է, Բ. թէև արտաքուստ «ախ ուսում, վախ ուսում» ասելով է օրերը մթնացնում, բայց երբ որ գալիս է գործելու ժամանակ, կրակով պէտք է փնտռես ուսումնասէր տէր հօրը որ գուցէ գտնես։ Իսկ Գ. մի առողջ, կարճ ու հաստ, կարմիր այտերով և գեղեցկատեսիլ արարած է։ Ուսումնասիրութեան վերաբերութեամբ տէր-հայրը «ոչ այսպէս է և ոչ այնպէս, այլ որպէս զիտցի, զոր հոսէ հողմ ի վերա երեսաց երկրի»։ Բայց Բագոսի ամենասիրելի և մտերիմ բարեկամն է. ոչ միայն իր աննշան կարողութիւնը, այլ և իր կեանքը չի խնայի իր թանկագին բարեկամի համար. մի խօսքով տէր-հօր միակ մխիթարութիւնը իր սիրելի Բագոսն է. նորա հետ է ճաշում, նորա հետ է զբօսնում, նորա հետ ննջում....Այս գիւղացիքը ունեն մի փառաւոր եկեղեցի, որ իր վայելուչ չինուածքով և գմբէթաւոր զանկատանով միակ փառքն ու պարծանքն է իրանց։—Կաթոլիկները մինչև ցայսօր երբէք դպրոց չեն ունեցել և չեն էլ մտածում ունենալ։ Մի եկեղեցի ունեն, որ գիւղի ամենայեռընկած ու բլրված խրճիթներից շատ ստոր է...։

Դահարլեցի

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

28 փետրվարի

Քաղաքիս ուսուցչական խումբը, բացի այն որ կրթում է քաղաքիս մանուկներին, ուզեց դաստիարակել նրանց հայրերին ու մայրերին։ Սրա համար յունվարին դուրս եկաւ այդ խումբը բեմի վրա ներկայացնելու «Թուղթ խաղացողի կեանքը»։ Այս պիեսան ներկայացնելով, մեր մանուկներին կրթողները կամեցան հասկացնել հասարակութեանը թէ թուղթ խաղալը լաւ բան չէ, ով որ խաղայ, ժօրժի օրին կընկնի,—աղքատ և թշուառ, աքսորված ու թափառական, գող ու աւազակ և վերջապէս մարդասպան կը դառնայ։ Բայց եկ, ընթերցող, իրար հետ մըտնենք քաղաքիս հիւրատունը, ես քեզ ցոյց կը տամ ծեր և պատկառելի դը-Ժերմանիին, որ իր որդուն թուղթ խաղալու համար անիծում էր այժմ ինքը նստել է կանաչ սեղանի մօտ, ժօրժի, իր որդու դերն է կատարում, թուղթ է խաղում։ Բաղերմանը, որ սաստիկ հակառակ լինելով թուղթ խաղալուն՝ իր եղբօր աղջկան չէ կամենում թուղթ խաղացողի կին դարձնել, ինքը կանաչ սեղանի մօտ ժօրժ է դառնում։ Պ. Բոդոլֆն էլ խօսածին հակառակ է վարվում այժմ. այնտեղ ասում է՝ «քսան հազար ֆրանկ տարուելով ես մարդիկ ճանաչեցի», խոստանում է Դերմոնին, որ այլ ես թուղթ չի խաղայ, բայց ինչպէս երևում է, ոչ մարդիկ է ճանաչել և ոչ էլ իր խոստումն է կատարում, այլ ուզում է որ կրկին փորձվի։ Ահա այսպէս են մեր քաղաքի առաջին և երկրորդ ուսումնարանների ուսուցիչներից մեծ մասը, այլոց քարոզողներ են և իրանք անփորձ են։ Եկ ուրեմն, դու ինձ հետ համոզվիր, ընթերցող, որ ուրիշ երկիրներում դէպի բարին առաջնորդող թատրոնը այստեղ դէպի չարն է մղում նոյն իսկ դերասաններին։

Ներկայացումներից յետոյ հասան բարեկենդանի օրերը, երբ պէտք է դաստիարակվեն մեր գրպանները, զանազան կերակուրներով լցվեն մեր ստամոքսները, հարբեցուցիչ խմիչքներով ուռչեն ու փքվեն փորերը, բայց ինչ եմ ցաւեցնում ձեր զլուխները։

Փետրվարի ութն է։—Եկեղեցիների զանգակները մի առանձին դրաւիչ կերպով հրաւիրում են աստուածասէր ժողովրդին եկեղեցի, և ես հետևում եմ դրանց օրինակին։ Ի՞նչ եմ տեսնում ճանապարհին՝—կանայք և օրիորդներ, ծերեր երիտասարդներ, թէ արհեստաւորներ և թէ վաճառականներ, տգէտներ և գիտնականներ հրապուրվել են զանգակների քաղցր ձայներից և դիմում են եկեղեցի։ Տեսնեմ եկեղեցում սեղանի առաջ կանգնել են մատաղահաս աշակերտուհիք իրանց վարժուհիներով և երգում են քաղցրաձայն իրանց ակնոցաւոր ուսուցչով, դասումն էլ կանգնած են աշակերտները և իրանց ուսուցիչները, իսկ սեղանի վրա մի քանի խըռոպոտաձայն տիրացուներ։

Պատարագը վերջացաւ և ս. Վարդանանց տօնակատարութեան հանդէսը սկսվեցաւ դերապատիւ առաջնորդի քարոզով և վերջացաւ մի քանի ճառերով։

Եկեղեցուց դուրս եկայ և մի աղգասիրական գործ ինձ սաստիկ ուրախացրեց, այն է պ. պ. Տիգրանեանցների Սահականուշեան ձրիավարժ օրիորդական ուսումնարանին ի յիշատակ իրանց վարդան եղբօր ընծայած չորս հարիւր ռուբլին ստացել է ուսումնարանի կառավարութիւնը, որի անդամներից մի քանիսը գնում էին նրանց շնորհակալութիւն մատուցանելու։

Ինչ տեսակ ուսումնարան է այս Սահականուշեան դպրոցը, որի համար ինչպէս երևում է ուսուցչական խումբը շատ է աշխատում, հարստացնելով նրա գանձարանը բացի միւս աղբիւրներից և նրա օգտին ներկայացումներ տալով։ Այս պատճառաւ այցելեցի մի օր այդ ուսումնարանը։ Ներս մտայ, ինչ եմ տեսնում. վաթսունի չափ օրիորդներ հաւաքված մի խոնաւ սենեակում և անճոռնի սեղանների մօտ նստարանների վրա նստած, սենեակի արանքից մեծ հաղորդակցութիւն կար դրսի և ներսի օդի մէջ, վառարանը փչացած էր երևում, փողոցի վրա գտնված լուսամուտների ապակիներից մի քանիսը կոտրատած, պատերի կէսը խոնաւութենից դեղնած, գրատախտակների երեսի ներկը գնացած, մօտերին մի—մի տաս-տաս ֆունտ քաշող թաց փալասի կըտորներ դրած. ինչ երկարացնեմ, աւելի նման էր մի սնանկացած մարդու սենեակի, քան դասատան։ Պատիւ ունեցայ խօսել հայոց լեզուի դասատուի հետ և իմացայ դրանց այս տարվայ համար նշանակած կուրսը, բայց լսելով պարոնի դասաւանութիւնը տեսայ, որ շատ հեռու են իրանց նշանակած կուրսի վերջանալուն։ Սրա պատճառն էլ իմացայ ուսուցչից, այն է որ մինչև նոր տարի ուրիշ վարժապետներ են եղել հայոց լեզուի դասատուներ, որոց մինը ամիսներով Թիֆլիսում էր անցկացնում իր օրերը։ Ցետոյ ուսումնարանի կառավարութիւնը տեսնելով, որ առաջադիմութիւն պիտի չը նշմարվի, դասերն յանձնել էր այս պարոնին։ Ահա այս տեսակ ուսումնարանի համար են ուսուցիչները աշխատում միայն նրա գանձարանը հարստացնելով և ճոխացնելով, իսկ աշակերտների մէջ յառաջադիմութեան նշոյլ անդամ չէ երևում։ Սրա կառավարութիւնը ինչ է անում արդեօք, որ աշակերտուհիներն տան խոնաւութեան պատճառով ֆիզիքապէս և ուսուցիչների անհոգութեան պատճառով մտաւորապէս վնասվում են։ Ուրեմն, մտածեցի ինձ ու ինձ, այս ուսումնարանի դասերը նման են աղքատի վերմակի, որ ուսումնարանի կառավարութիւնը աշխատում է սրա նրա վրա ձգել։

Իմանալով որ ուսուցիչները այստեղ ձրի են դասախօսում, մոքումս արդարացնում էի նրանց անհոգութիւնը, ուստի վարձաւոր ասպարէզի մէջ կամեցայ տեսնել նրանց գործունէութիւնը։

Այս պատճառով այցելեցի հոգևոր ուսումնարանի երկրորդ դասատունը, ուր բաղդի բերմամբ երգեցողութեան դաս էր. բաղդի բերմամբ եմ ասում, որովհետև Վարդանանց տօնի երգեցողութիւնը տեսնելով հետաքրքրութիւնս շարժվեցաւ թէ ինչքան են անցնում ուսումնարանում ձայնագրութիւնից։ Բարևեցի ուսուցչին, պատիւ ունեցայ այս ակնոցաւոր պարոնի հետ ծանօթանալ, բաւականին խօսեցայ սրա հետ, զարդացած էր երևում, բայց իր արհեստում չատ տգէտ։

Մի քիչ էլ այդ դասատան մասին լսեցէք, ընթերցող, սրա առաստաղն է ճեղքած, ներկերը թափված, պատերի կիրը շատ տեղ փչացած, դասատան մէջ նշմարելի կերպով մուխ և թոզ խառնված, երևումէր որ աշակերտներն էին կըռուած և դասատան վառարանն էլ խարաբ էր եղած։

Հարցրի ուսուցչին թէ ձայնագրութիւնից այս դասատանը որքան պէտք է սովորին, պարոն։ — Պատարագի արարողութիւնը, պարոն, ասաց, անկէ վերջը զանազան շարականներ ութը ձայների եղանակաւ, և աւելացրեց, քաջայոյս եմք, պարոն, որ այս տարի մեր վրա դրած պարտքը բարեխղճաբար կատարեմք կոր»։ Իսկ յետոյ շարունակեց իր դասախօսութիւնը. տեսայ որ ուսումնական տարվայ մեծ մասն անցել է և դեռ փո, է, վէ, բէն չեն կարող կանոնաւոր կերպիւ երգել։

Մտածում էի... ուսումնարանը հոգաբարձուներ չունի՞ արդեօք, և եթէ ունի, ինչ են անում որ ուսումնարանի վրա չեն հոգում, լաւ է... Հոգաբարձու են դառնում և ոչինչ չեն չինում, վեց ամիս է որ ուսումնարանը բաց է և դեռ երեք չորս անգամ հազիւ են ժողովվել, այն էլ ոչ բոլորը այլ մի քանիսը միայն։ Ուսումնարանը քանդվում է, ուսուցիչը պարապում է, նշանակած կուրսը անցնում է թէ չէ անցնում, նրանց ինչ հոգսը, ամեն բան յանձնել են վարժապետներին, իսկ սրանք ինչ որ ուզում են անում են. ոմանք դասերին ուշ են գալիս և երբեմն երբէք, ոմանք ամբողջ գիշերը թուղթ են խաղում և երևակայիր, ընթերցող, թէ ցերեկը ինչպէս պարապելիս կը լինեն, երբեմն գիշերները թուղթ խաղալով անքուն անցնելու պատճառաւ ոմանք հիւանդանում ու օրերով դասի չեն գալիս, որը ինչպէս լսում եմ, ամիսներով Թիֆլիսում չալիշ գալիս, և սրա դասերին աշակերտները մնում են պարապ։ Հոգաբարձուները գիտեն այս բանը, կարծեմ ոչ, որովհետև նրանք չեն այցելում ուսումնարանը, ուսուցիչներից մի քանիսը թող են փչել նրանց աչքում, որ եթէ գան էլ կոյրի պէս չեն տեսնի սրանց պակասութիւնները։

**

ՆԵՐՔԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Շնորհակալութեամբ ստացանք Թիֆլիսի Կրուժոկի վարչութենից այդտեղ կարդացվելու դասախօսութիւնների համար տոմսակներ։ Դասախօսութիւնները սկսվեցան մարտի 3-ին, երկրորդը կը լինի այսօր մարտի 6-ին, հետևեալները մարտի 10-ին, 13-ին, 17-ին, 20-ին և վերջապէս մարտի 24-ին։ Դասախօսութիւնների ժամանակ անպատճառ ներկայ գտնվելու է «Մշակի» խմբագրութենից այս կամ այն ներկայացուցիչ։

—

Ստացանք «Փորձ» ամսագրի մարտ ամսի, երրորդ տետրակը։

—

Մարտի 4-ին, կիրակի օրը Թիֆլիսի Դումայի կրկին գումարվեցաւ քաղաքագլուխ ընտրելու դիտաւորութեամբ։ Երկու կանդիդատներ միայն քուէարկվեցան՝ իշխան Կոնստանտին Բէբութով, «Тифл. Вѣстн.» լրագրի խմբագիրը և Մ. Գ. Ալիխանով։ Կանդիդատներից ոչ մինը չը ստացաւ բաւական ընտրողական ձայներ։ Որքան յիշում ենք, առաջինը ստացաւ միայն 25, իսկ երկրորդը 24 սպիտակ քուէներ։ Ընտրութիւնները յետաձգվեցան կրկին միւս կիրակի օրը։ Որովհետև ընտրութիւնները չեն աջողվում և քաղաքը առանց քաղաքագլուխ է մնում, մնում է միայն խորհուրդ տալ Թիֆլիսի ձայնաւորներին իրանց քաղաքագլուխ քուէարկելու փոխանակ վիճակ գցել։

—

Մարտի 4-ին Մոսկվայի երիտասարդ երաժիշտ պ. Բրոդսկի տուեց Թիֆլիսի Սոբրանիայում իր առաջին կոնցերտը։ Կոնցերտին մասնակցում էր պ. Պաչկովսկի։ Ճշմարիտն ասած, մենք հիացած մնացինք պ. Բրոդսկու ջութակի վրա ածելուց։ Այդ տեսակ նուրբ, զգացմունքով լի և հարուստ տեխնիկայով խաղը մենք վաղուց չենք լսել։ Պարոնը դեռ մի կոնտսկի կամ մի Վենեավսկի չէ, բայց ժամանակով կակղող է դառնալ, որովհետև երևելի ածող դառնալու համար ունի բոլոր յատկութիւնները։ Հարկաւոր ենք համարում յիշել մեր ընթերցողներին որ վաղը, չորեքշաբթի, մարտի 7-ին, պ. Բրոդսկի տալու է իր երկրորդ և վերջին կոնցերտը, այս անգամ Կրուժոկի դահլիճում։ Խորհուրդ ենք տալիս հասարակութեանը գնալ լսել այդ չնորհակալի երաժշտի դեղեցիկ խաղը։ Հաւատացնում ենք, որ երաժշտութեան սիրողները չեն փոշմանվի, եթէ հետևեն մեր խորհրդին, այլ հաւատացած ենք որ մեզ շնորհակալութիւն էլ կը յայտնեն։ Պ. Բրոդսկին մեծ աջողութիւն ունեցաւ իր առաջին կոնցերտի մէջ երկու հետևեալ պիէսաներում. «Օրօրոցի երգը» Սիմոնի երաժշտութիւն, և «Դևերի պարը» Բացցինիի հեղինակութիւն։ Այդ պիէսաներից յետոյ առաջին երկու կարգերում նստողների մեծ մասը, երաժշտին ծանօթ թէ անծանօթ, չը կարողանալով զսպել իրանց հիացումը, վեր կացան իրանց տեղերից, և մօտենալով երաժշտին, հերթով սեղմում էին նրա ձեռքը։ Կոնցերտին ներկայ գտնվող հասարակութիւնը, ինչպէս նկատեցինք, մեծ մասամբ բաղկացած էր հայերից և հայուհիներից։

—

Մարտի 3-ին Թիֆլիսի Կրուժոկի մէջ պ. Երիցով կարդաց իր դասախօսութեան սկիզբը «Ռուսաց և Թիւրքաց չարերի հանդիպելը Փոքր-Ասիայում»։ Պարոնի դասախօսութիւնը սաստիկ հարուստ է տեղեկութիւններով, բայց մեր կարծիքով, սեփական եզրակացութիւնների պակասութեան պատճառով այնքան տպաւորութիւն չէ գործում ունկնդիրների վրա, որքան կարող էր գործել, եթէ իրողութիւնները աւելի սիստեմական կերպով դասաւորված լինէին և հարկաւոր եզրակացութիւնները դուրս բերված լինէին փաստերի առագին քանակութենից։ Կը սպասենք եզրակացութիւնների այսօրվայ դասախօսութեան մէջ։

—

Թիֆլիսի Ներսիսեան հայոց ազգային—հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ այս մարտ ամսի 14-ին, երեկոյեան 7 ժամին, կը լինի աճուրդ (առանց կրկնաճուրդի) կապալով տալու Թէյէթի սուրբ Գէորգի ուխտատեղի գաւթում գտնված մի կրպակ իր մի սենեակով։ Պայմանաթուղթը (Кондиція) կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 12 կէսօրին։

—

Ստացանք պ. Կարապետ Մարգարեանից 55 ռուբլի յօգուտ «Արարատեան ընկերութեան», որ հաւաքված է Թիֆլիսում գտնված Սարաջևի քարվանսարայում ժամանակաւորապէս բնակվող ախալքալաքցիներից։ Նուիրատուութիւնները հաւաքված է պ. Ցարութիւն Ցարութիւնեանցի առաջարկութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈԼԳԱՐԻԱ

—

«Times» լրագիրը մանրամասն նկարագրում է սահմանադրութեան այն կանոնները, որոնց Ռուսաստանը առաջարկել է բոլգարական ազգային ժողովին։ Բոլոր այդ կանոնները բաղկացած են 170 յօդուածներից. և այդ յօդուածները վերաբերվում են կառավարութեան բոլոր օրէնքներին. մինչև անգամ այդ յօդուածներից մի քանիսն էլ նուիրված են ժողովրդական ուսման։ Աւելորդ ենք համարում մի առ մի խօսել այդ յօդուածների մասին, որովհետև դրանցից մեծ մասը առնված են այնպիսի միապետական պետութիւններից, որոնք սահմանադրական օրէնքներով են կառավարվում։ Միայն մենք կը թուենք այն յօդուածները, որոնք բացառապէս Բոլգարիային են տրված։ Այդ յօդուածները հետևեալներն են։ Երկրի մէջ տիրապետող դաւանութիւնը ուղղափառ (յունական) կրօնը պէտք է լինի, և տիրապետող իշխանները այդ կրօնը պէտք է դաւանեն, եթէ հարկաւոր լինի ներկայ ընտրվող իշխանը միայն կարող է բացառութիւն կազմել։ Բոլոր դաւանութիւններին ազատութիւն է տրվում, եթէ միայն այդ դաւանութիւնների սկզբունքը հակառակ չէ պետութեան կանոններին։ Տարրական ուսումը պարտաւորեցուցիչ է հրատարակված. բայց սահմանադրութիւնը ոչինչ չէ ասում և այն ուսումնարանների պարտաւորեցուցիչ լինելու մասին, ուր երեխաները ստիպված պէտք է լինեն գնալու։ Մամուլը ազատ է, բայց սրա համար մի առանձին օրէնք կը հրատարակվի, որի զօրութեամբ պատժի կենթարկվեն նրանք, որոնք ի չար կը գործածեն մամուլի ազատութիւնը։ Իրաւունք է տրվում առանց որևէ սկզբնական ազդարարութեան ժողովներ կազմել, բայց այն ժողովները, որոնք բնակութիւններից դուրս, բացօթեայ կը լինեն, նրանք կենթարկվեն պոլիցիայի հսկողութեանը։

Ասում են, որ իշխան Դոնդուկով-Կորսակով յետաձգեց իր Ֆիլիպպոպոլ գնալը, որպէս զի իր ներկայութեամբ վերահսկողութիւն գործէ, որ ազգային ժողովի առաջին նստի

մէջ, սահմանադրական կանոնների դէմ ոչինչ չը գործվի, իշխանը կաշխատի նոյնպէս, որ Բերլինի կոնգրէսի դաշնադրութեան դէմ էլ ոչինչ չը լինի։ Ազգային ժողովի այդ օրվայ նիստի ժամանակ, Բուլգարիայի պատգամաւորները կը ներկայանան ժողովին։ Զափաւոր կուսակցութիւնը յաղթող է հանդիսանում։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻ

Կ. Պոլիս, 13 փետրվարի

Զէյթունի խնդիր, Պատրիարքի հրաժարականի խնդիր, Հայաստանի բարենորոգմանց խնդիր, ահա ազգային ուշադրութեան առարկաներն այսօր։

Փետրվարի 16-ին Ազգային ժողովն գումարեցաւ. նիստն դռնփակ էր, զի այնպիսի խնդիրներ կը յուզուեն որք հարկ է երբեմն գաղտնի մնան, և եղած վիճաբանութիւններն ամեն ականջի չը հասնեն։

Քաղաքական ժողովը կը հրաւիրէր երեսփոխանաց ուշադրութիւնը Պատրիարքական հրաժարականի վրա դիտել տալով որ մինչդեռ սրբազան չը ստորագրէր պաշտօնական գրերն, ազգային գործերն երեսի վրա կը մնան, հետեւաբար հրաժարման կը խնդրէր։ Ազգ. ժողովը յանձնարարից Քաղ. ժողովոյ բանակցել Սրբազան հօր հետ, նորա իմաստութեանն թողուլ այս փափուկ խնդրոյ լուծումն։

Կը կարծուի թէ ժամն հասած է որ Պատրիարք սրբազանը իւր հրաժարականը ետ առնու և արիաբար վերստին ազգային գործոց վարչութեան գլուխն անցնի. զի իւր հրաժարականը մեծ արդիւնք ունեցաւ և Հայաստանի բարենորոգմանց խնդիրն կերպարանք մը առաւ։ Ազգ. ժողովոյ փետրվար 16-ի նստի օրակարգի առաջին խնդիրն Հայաստանի բարենորոգմանց խնդիրն էր, գիտէք որ ժողովը իւր փետրվար 9-ի նստին մէջ յանձնաժողով մը ընտրած էր պատրաստելու համար Հայաստանի մէջ ըլլալիք բարեկարգութեանց ծրագիրն։ Յանձնաժողովը բերաւ իւր տեղեկագիրն. մեր թերթերն տակաւին չը հրատարակեցին այդ տեղեկագրի եղրակացութիւնը և ուրիշ կարեւոր կէտեր. սակայն «Մշակի» ընթերցողաց փութով հաղորդելու համար կարողացայ մի քանի երեսփոխաններէ ստանալ հարկ եղած տեղեկութիւններն որք հետեւեալներն են։

Հայաստանի մէջ հայ ժողովուրդը պէտք է իւր բաժինը ունենայ տեղական կառավարութեան գործոց մէջ, և հետեւաբար մասնակցի իւր իրաւանց սահմանի չափով և

1. տեղական վարչութեան
2. տեղական ատիկանութեան
3. տեղական դատարանաց

Ազգ. ժողովը սոյն էական առաջարկութիւնը ուշի ուշով և ջերմ վիճաբանութեամբ քննելէ վերջ ընդունեց. սակայն հարկ է որ ժողովոյ այս պահանջումներն որք ազգային ծրագիր մը պիտի համարուին ազգին ուշադրութիւնէն երբէք չը վրիպին և Ազգ. ժողովը զոհ չըլլայ միայն զանոնք քուէարկելով այլ նաև հսկէ անդուլ նոցա գործադրութեանն։ Ժողովն այնքան զգացած էր այս պէտքն որ որոշեց թէ այն յանձնաժողովն որ պատրաստած էր այս ծրագիրն մնայուն յանձնաժողով մը լինի և համաձայն Պատրիարք սրբազանի և ազգ. վարչութեան հետ աշխատի ի գործ դնել Ազգ. ժողովոյ որոշումներն։ Այդ յանձնաժողովը կազմուած է հետեւեալ անձերէ։

Իզմիրլեան Մատթէոս եպիսկոպոս, Ասլանեան Ներսէս վարդապետ	կրօնական ժողովը
Պալէօզեան Լազոֆէթ, Ալթուն—Տիւրքի	քաղաքական ժողովն
Փափազեան Ստեփան Մէրէմգուլղի—Յարութիւն	ընդհանուր ժողովն։

Ժողովն հետեւեալ մեծ և կարեւոր յանձնարարութիւնը ևս կանէ յանձնաժողովոյ «Ազգ. ժողովը կը յանձնարարէ մնայուն յանձնաժողովոյ որ Բերլինի դաշնագրի 61 յօդուածն ի գործ դրելու համար աջակցի Ս. Պատրիարք հօր, և Ազգ. ժողովոյ հաղորդէ պարբերաբար ի ձեռս բերուած արդիւնքն։—Յանձնաժողովը հետամուտ լինի որ միջազգային մասնաժողովոյ մը ձեռամբ Հայաստանի բարեկարգութիւններն ի գործ դրուին։»

Փետրվար 16-ի նիստն ազգային պատմութեան մէջ կարևոր էջ մը պիտի գրաւէ։ Ինչ փոփոխութիւն ժամանակի. 1870-ի և 1876-ին այն ժողովն դարձեալ օսմ. կառավարութենէն Հայաստանի բարեկարգութիւններ կը խնդրէր, սակայն որչափ տարբեր այժմու խնդրած են. այն օրերու առաջարկութիւններն այսօր մեզ համար ոչինչ կերևին, զի երբ այժմ կըսեմք թէ հայք մասնակցեն տեղական կառավարութեան, որ ըսելէ հայ կառավարիչներ լինեն, երբ կըսեմք թէ հայք մասնակցեն ոստիկանութեան, որ ըսել է զէնք ունենան, երբ կը լսեմք թէ հայք մասնակցեն դատարանաց, որ ըսել է մեր օրէնքն օրէնք ըլլայ, կարծեմք դէպի Հայաստանի ինքնօրինութիւն մեծ քայլ մը առած կըլլամք. և այն ժամանակներով մտքէն այստիսի երազ մը կանցնէր։

Այն օրերն Ազգ. ժողովն իբր պաղատող կը ներկայանար, այսօր միջազգային դաշնագրի մը յենած, ազգային զգացումը իրեն շառաւիղ և աջակից ունենալով իբր իրաւանց տէր ժողովուրդ մը պահանջումներ կանէ. պատասխանատու յանձնաժողովներ կը կարգէ, եւրոպացոց միջամտութիւնը կը խնդրէ օսմանցւոյ գործերուն մէջ։

Եթէ այս անցքերն ուշադրութեամբ և հեռատեսութեամբ քննեմք կը տեսնեմք որ հայ ազգն քաղաքական մի նոր ասպարէզի մէջ կը թեւակոխի։

Զարմանալի Ազգ. ժողով որ երբեմն ոչինչ խնդիրներով կը կորսնցնէ իւր ժամանակ, իսկ յանկարծ այնպիսի կենդանութեան ոգի կառնու, այնպիսի արիութեամբ կը գործէ որ ամենուն համակրանքն, սէրն կը գրաւէ, նոր ոգի կազդէ ժողովուրդին, նոր յոյսեր կարծարձէ, աշխարհի ամեն կողմէ հայութեան աչքերն ի նա կը հառին իբր միակ յոյս հայրենեաց փրկութեան։ Մեք որ երբեմն իրաւամբ խիստ կերպով դատեցինք այդ ժողովը այսօր պէտք է խոստովանինք որ նոր շաւղի մը մէջ կը մտնէ և եթէ այսպէս շարունակէ ազգին երախտագիտութեանն պիտի արժանանայ։

Ազգ. ժողովոյ որոշումներն դեսպանատանց առաջ կարևորութիւն կը ստանայ, զի հայկական դատն ի հանդէս կածէ և մինչ Բերլինի դաշնագրի 61 յօդուածի ստորագրողի Հայաստանի բարեկարգութիւններն իրենց և Դրան մէջ կատարելիք գործողութիւն մը կը համարէին ահա երրորդ մը կը ներկայանայ իբր տէր այդ յօդուածի։ Անգղիոյ կառավարութիւնը, և ստոյգ գիտեմք, որ չուզէր հայկական խնդրոյ մը ծագումը տեսնել դժկամակած է Ազգ. ժողովոյ ընթացքէ, և կը հաւատեն որ Դրան առաջ պնդեր է որ Հայաստանի համար մի քանի բարեկարգութիւններ անեն «Հայոց ձայնը կտրելու համար»—Պ. Մելէտ, Անգղիոյ արդի առժամանակեայ Կ. Պոլսոյ դեսպանն, Պատրիարքարան կուգայ բայց հոն չը գտնէր Պատրիարք սրբազանը զի իբր հրաժարեալ հոն չէ այժմ. հետաքրքիր էինք իմանալ թէ ինչ ունէր ասելիք։

Զէյթունի անցքերն հաղորդած էի նախորդ նամակում, այժմ «Մասիսի» եթէ հաւատամք, Զէյթունի գայմագամը կարող եղած է փախչել և ազատիլ։—Իսկ Մարաշի կառավարիչը մեծ զօրութեամբ կը դիմէ դարձեալ Զէյթունի վրա։

Սակայն ժողովրդի մէջ լուրերն լաւ են. կը կարծեմք թէ քիչ օրէն կարող ըլլամք աւետել թէ Զէյթունի մէջ հայ կառավարիչ մը նստած է։—Կը հաւատեն թէ Անդղիոյ կողմանէ հաղորդուած է Դրան որ Զէյթուն խնդիրն երկարատև չը յուզէ հայ ժողովուրդն և վերջ մը տրվի։—Զէյթունի հետ զինադադար մը կնքելու խօսք կայ։

Այս առաւօտ կը լսեմք որ Հալէպի կառավարիչ Քեամիլ բաշա, ոխերիմ թշնամի հայոց և ամենուրեք մեզ վնասաբեր պաշտօնանկ եղած է։

Դրան կողմանէ երկու յանձնաժողովներ բարեկարգութեանց համար Հայաստան երթալին հաղորդած էի։ Կիլիկիոյ կողմը երթալիք յանձնաժողովի մէջ հայ անդամ չէր գտնուէր. կերևի թէ այս մասին շատ դիտողութիւններ լինելով Դուռը Նուրեան էֆէնտի որ Վանայ կողմը պիտի երթար այդ յանձնաժողովոյ էլ կանցնէ, իսկ նորա տեղ Վանայ կողմը Աղաբէգեան Սարգիս-էֆէնտին (եղբայր Մարկոս Աղաբէգեանի) կը կարգէ։ Այս ընտրութենէն մեծապէս դժգոհ եմք, զի քանի անգամ մօտ յիշեալ էֆէնտին Հայաստանի կողմը պաշտօն ստանձնած է, մանաւանդ Զէյթունի առաջին յեղափոխութեան միջոց, միշտ տխուր յիշատակներ թողած է։ Ցուսամք թէ այս անգամ ուրիշ ընթացք բռնէ։ Կիլիկիայ երթալիք յանձնաժողովոյ պիտի ընկերանան մի անդղիացի և թերևս մի ֆրանսիացի և թէպէտ առ երեսս ոչ պաշտօնապէս, զի Դրան հաճելի չէ՝ բայց ամեն գործոց հետամուտ պիտի լինեն։

Շատ զարմացանք երբ «Մշակի» 16 թիւոյն մէջ պարահանդէսներու վրա տեղեկութիւն կարդացինք. Ֆրանսիայի դեսպանն միայն «Արարատեան ընկերութեան» պաշտպան հանդիսացաւ պարահանդէսի համար, և այն ալ ոչ թէ իր պալատին մէջ, զի երբ պալատի մէջ լինի առանց ստակի կը լինի։—Իսկ Լէյարտի համար չեմք գիտեր ով է լսեր թէ չորս հայ պարահանդէսներու պաշտպանութիւն ըրաւ. միայն «Դպրոցասէր ընկերութեան» տուաւ այդ պաշտպանութիւնը, այդ պարահանդէսն «Արարատեան» պարահանդէսէ վերջ տեղի ունեցաւ։—Ցունաց նախանձն սխալ չէ։—Մեք «Մշակի» վրա մեծ համարում ունիմք, ուստի երբ կը տեսնեմք սխալ լուր մը կը նեղանամք եթէ մեզ ներելի լիներ դիտողութիւն մը անել պիտի խնդրէինք որ ամեն նամակագրի հաւատք չընծայէք։—Իմ մասին եթէ երբեմն ուշ կը հաղորդեմ տեղեկութիւններ բայց միշտ ջանացած եմ որչափ հնար է ստուգութիւններն հաստատել և ապա ձեզ գրել, զի «Մշակի» պէս լուրջ թերթի մը և միանգամայն ճշմարտասէր, պատրել ներելի չէ մեզ համար։

Պ. Ջերազի գրքի ա. հատորն լոյս տեսաւ, «Հայաստան և Իտալիա» շատ հետաքրքրական է. կապահովցնեմ որ Ռուսաստանի հայք շատ պիտի ախորժեն այդ գրքէն։—

Երէկ կազմուեցաւ մի նոր ընկերութիւն «Կիլիկեան» անուամբ նպատակ ունենալով Կիլիկիոյ մէջ ուսում ծաւալել։—Նախագահ ընտրվեց պ. Մինաս Ջերազը։—

Շատ ուրախութեամբ տեսանք որ մի ազնիւ պարոն Տփխիսէն սկսած է «Մասիսին» թղթակցել, մեծ յոյս ունեմք որ իւր թղթակցութիւններն Տաճկաստանի հայոց ստոյգ տեղեկութիւններ պիտի հաղորդեն Ռուսաստանի մեր եղբարց նկատմամբ. մեր շնորհակալութիւնը կը յայտնեմք միշտ ազգասէր պարոնին, որ Ռուսաստանցի կը ստորագրէ։—

Ցիշեալ պարոնը որ Ռուսաստանցի կը ստորագրէ «Մասիսի» ուշադրութեանը յանձնած է, «Մեղուի» մի թիւն յորում 10,000 ռուբլիի խընդիր մը կայ։ Ըստ «Մեղուի թղթակցին Վեհափառ Կաթողիկոսը գաղթականաց համար գոյացած դրամէն 10,000 ռուբլի «Արարատեան ընկերութեան» խրկած է։—

«Մասիս» այս լուրն հրատարակելով «Արարատեան ընկերութեան» ուշադրութիւնը կը հրաւիրէ։ Մի քանի օր է որ այս խնդրոյն վրա շարունակ կը խօսուի ամեն կողմ։ Այդ դրամն Վահրամ սրբազան ձեռօք խրկած է կասէր նամակագիրը։—

Սակայն Վահրամ սրբազան երբ Կ. Պոլիս էր տեսակցութիւն ունեցաւ «Արարատեան ընկերութեան» նախագահի հետ, բայց ոչինչ յանձնեց։—Մենք ալ առանց ո և է տարակուսի հաստատապէս կըսենք թէ «Արարատեան ընկերութիւնը» տակաւին Նորին Վեհափառութեան կողմէ նուէր չէ ընդունած և կը խնդրեմք «Մեղուի» պատուարժան թղթակցէն որ իւր տուած լրոյն սխալ լինելն ուղղէ։

Սակայն կը յուսամք թէ Նորին Վեհափառութիւն պիտի բարեհաճի օր մը իւր ուշադրութիւնը «Արարատեան ընկերութեան» վրա դարձնել։ Պատրիարք սրբազանի առ ընկերութիւնն տածած սէրն, համակրանքն և նորա յառաջադիմութեան համար տարած խնամքն բաւական երաշխաւորութիւն կընծայեն յաչս Նորին Վեհափառութեան։

Մենք իբր հայ սրտագին կը փափագիմք որ ամեն հայեր սիրեն, յարգեն էջմիածին և անձնուէր հոգի ունենան Հայաստանեայց մեծարելի Հայրապետին նկատմամբ, զի այս կը պահանջէ ազգի շահերն։ Այս համոզմամբ է որ միշտ խընդրած եմք Նորին Վեհափառութենէն որ հայ ազգի կենսական խնդրոյ իւր պաշտպանութիւնը չնորհէ,

Այսօր հայ ժողովուրդի ամենէն էական խընդիրներէն մին դաստիարակութեան խնդիրն է և Տաճկաստանի հայ ժողովուրդը մեծ եռանդով իւր զաւակաց դաստիարակութեան կը մտածէ... ուստի եթէ Նորին Վեհափառութիւնը «Արարատեան» վարժարանաց ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստամատոյց լինի անշուշտ ժողովուրդը մեծապէս երախտապարտ պիտի լինի առ Նորին Վեհափառութիւն։

Հայկակ

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 փետրվարի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 62 կ., երկրորդ 96 ր. 12 կ., երրորդ 95 ր. 25 կ.։ չորրորդ 95 ր. 62 կ., ըքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 235 ր. 5 կ., երկրորդ 235 ր. 5 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 93 ր. 37 կ., ոսկի 8 ր. 41 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 23,50 պէնս։ Տրամադրութիւնը առաջ ամուր էր, վերջը թուլացաւ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի։ Ասում են, որ պատերազմական մինիստրութեան գլխաւոր ինտէնդանտ Կաուֆման Թողնում է պաշտօնը, և ինտենդանտական մասնի գեներալ ինսպէկտորի կոչում է ընդունում։ Նրան կը յաջորդէ Սկվօրցով։

ՍԻԻԳԵՌԻՆ, 1/13 մարտի։ Սարսափելի հեղեղ է եղել։ Ազատարար մակոյկները, խիփելով փողոցների վրա կոտրտանքներին, անհնար են գտնվում ազատելու զոհերին։ Կատաղի փոթորիկ է։

ՎԷՐՍԱՅԼ 1/13 մարտի։ Պատգամաւորների ժողովում, Վադդինգտոնի ճառից յետոյ, որի մէջ նա պարսաւում էր մայիսի 16-ի մինիստրներին, և որի մէջ նա չէր կամենում, որ նրանց դատաստանի ենթարկեն, ժողովը մերժեց նրանց դատաստանի ենթարկելու առաջարկութիւնը, և անցաւ հերթական հարցերին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի։ Այն լուրերը, որ Ս. Պետերբուրգում երկու գաղտնի տպարաններ են գտնվել, հաստատվում են։ Ասում են, որ այդ առիթով կալանաւորված են 60 հոգի։

ԼՕՆԴՈՆ, 1/13 մարտի։ Այսօր կատարվեցաւ Կոնստանտինեան հերցոգի և իշխանուհի Լուիզայի հարսանիքի հանդէսը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի։ Կոմս Լորիս-Մելիքով մարտի 1-ից հեռագրում է, որ ժանտախտով այլ ևս հիւանդներ չը կան։ Վէտլեանկի բնակիչների հետազօտութիւնը դեռ շարունակվում է։ «Голосъ» լրագիրը հաղորդում է Վէտլեանկայից, որ բժիշկ Ռէյտլինգեր հասաւ այնտեղ։

ՑԷՏԻՆԻԷ, 1/13 մարտի։ Չերնոգորիան իր պետական կազմակերպութեան մէջ վերանորոգութիւններ է անում։ Սէնատի փոխարէն կայսերական խորհրդարան է կազմվում։ Հիմնվում են կասացիոնական և ապելյացիոնական դատաստանատներ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի։ Լուր է տարածվել թէ Կիէվում կալանաւորվածների թըւում կայ և մի բարձր դասակարգի կին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96⅝ ր., երկրորդ 96⅜ ր., երրորդ 95 ր. 25 կ., չորրորդ 95⅝ ր., ներքին փոխառութեան 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 237 ր. 75 կ., երկրորդ 233 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 93⅜ ր., երկրորդ 93 ր. 50 կ., ոսկի 8 ր. 39 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 23 7/16 պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 200 մարկ 25 պֆ. Փարիզի վրա 247 ֆրանկ։ Տրամադրութիւնը ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մարտի։ «Слово» ամսագիրը առաջին նախազգուշութիւն ստացաւ։ Կոմս Լորիս-Մելիքով մարտի 2-ից հեռագրում է, թէ հիւանդներ չը կան։

ՎԷՏԼԵԱՆԿԱ, 2 մարտի։ «Голосъ» լրագիրը հաղորդում է, որ Լորիս-Մելիքով Վոլգայի վրա կարանտինական ամենամեծ նախազգուշութեամբ ճանապարհորդեց։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի։ Այսօր սպասում են Շուվալովի գալուն։ «Правит. Вѣст.» լրագիրը հաղորդում է, որ Լորիս-Մելիքով մարտի 3-ին հեռագրում է, որ այսօր Վէտլեանկայի կարանտինական կապը վերցվեցաւ, միայն Սէլիտրինոէ գիւղում դեռ մնում է։

ՎԷՏԼԵԱՆԿԱ, 3 մարտի։ «Голосъ» լրագրին հեռագրում են, որ հետազօտութիւնը վերջացել է, և թէ հիւանդներ չը կան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մարտի։ Երէկ հասաւ այստեղ կոմս Շուվալով։

Խմբագիր—Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1879 թուին

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՑՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱՅՏ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒՐՋԱՆԻ ԿՈՒՐՍԷԲԱ ԳԻՒՂ ՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՕՆԻՆԳԻ ՊՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵ ՔԱ ԼԱՔԻՔ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ։

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ԵՒ
ՏԱՐԲԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը սկսաւ յունվարի 8-ին 1879 թուականի։

Մանկական պարտէզը ընդունվում են մանուկներ, երկու սեռի էլ, 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ տարրական դպրոցը 7-ից—12 տարեկանները։

Ուսման ընթացքը յարմարեցրած է միւս դպրոցների ընթացքին, այնպէս որ դպրոցում աւարտողները կարող են մտնել աղայք՝ տղայոց և աղջկունք՝ օրիորդաց դպրոցի առաջին դասատունքը։

Պարտէզն ու դպրոցը գտնվում են Վեչեամինովկի փողոցում Իշխան Ն. Ամատունու տանը. №—11։

ՌՈՒՍԱՑ ԹԷՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՅԻՑ նոր ստացվեցան 10000 ֆունտ ֆուչանի և կեսխտի թէյ սեփական փոխանակութեան 1 ռ. 20 կ. մինչև 8 ռ. ֆունտը։ Ֆուչանի թէյի համար ինձանից գնողներից շատերը նամակներով շնորհակալութիւն յայտնեցին, այս ուսեմ ապագայում գնողներից նոյնպէս ստանալ։ Ծախվում է մեծ քանակութեամբ և փոքր։ Փոստայի ծախսը ինձ վրա առնում եմ։ Հասցէն Միքայէլեան կամուրջ, «Кавказъ»-ի խմբագրատան տակ։ Վաճառական Ա. Պոլոսովին։

5—10

ԵՐԵՒԱՆՈՒՄ Աստաֆիեվսկայա փողոցի վրա, քաղաքի կենտրոնում ձեռնտու գնով ԾԱԽՎՈՒՄ Է քարից և կիրից շինած մի ՏՈՒՆ։ Տան մէջ կան տաս ԽԱՆՈՒԹՆԵՐ ամբարանոցներով, սառուցատուն և երեսուն և չորս ՍԵՆԵԱԿ ծառաների բնակարաններով և պաշտամբով տան ամբողջ երկայնութեամբ։ ԲԱԿԻ մեծութիւնը 2000 քառակուսի սաժէն է, բակի մէջ ԱԻԱԶԱՆ կայ։ Տան դիմացի կողմի ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆԸ 63 արշին է, իսկ ԼԱՅՆՈՒԹԻՒՆԸ նոյն կողմից 24 արշին։ Ամբողջ տունը տարեկան 5600 ռ. ԵԿԱՄՈՒՏ է տալիս։ Ցիշեալ տունը ԳՆԵԼ ցանկացողները կարող են դիմել Երևան տան տէր Արտեմ Պապիկեանցին։ Նոյն տան մէջ ցանկանում են յանձնել մէկ ուրիշի ՔԱՂՑՐԵՂԷՆՆԵՐԻ ԽԱՆՈՒԹ, պիտանի բոլոր պարագաներով։ ԱՐՏԵՄ ՊԱՊԻԿԵԱՆՑ։

1—4

ԿՕՐՇԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԵՐԹԵՒԵԿ պատրաստում է երեխաներին ՄԻՋՆԱԿԱՐԳ բոլոր ուսումնարանների ՓՈՔՐ դասատուների համար։ ՁԱՇԻՑ ԵՒՏՈՑ ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ։ Ֆրանսիերէն և գերմաներէն լեզուների գործնական և տէօրետիկական դասեր են տրվում։ Ուսումնարանը գտնվում է Վօրնցօվսկայա Նարերեժնայա փողոցի վրա, Բելևաեվի նախկին տանը, № 19.

2—3

Աղդ

Գառնիկ Ալէքսիանոս Յարութիւնեան, որը մականունը Սարբեան Սիվասցի. կ. Պոլիս Բերայի Թաղը ծնած, 18—20 տարեկան, արհեստը գրաշարութիւն, ինքը բարձրահասակ, երկու տարի է որ անգլիացի վաճառականի մը հետ ապէ (Պոլիսէն) ելած շոգենաւով Փոթի երթալու, և անկէ ալ Թիֆլիս անցնելու նպատակաւ ճամբայ ելած օրէս մինչև ցայսօր և ոչ մի լուր առնուած է. հայրը մեռած է և մայրը և քոյր մը ունի. ով որ տեսած է յիշեալ երիտասարդը, մարդասիրաբար ազգային լրագրաց իմաց տալու շնորհի ընելը կաղաչուի։

4—21

Եղիսաբէթ Յովհաննիսեան և Գրիգոր Ալէքսանդրեան ԱԶԻԶԵԱՆՆԵՐ սրտի ցաւով յայտնելով առաջինի ամուսնի և երկրորդի եղբօր, ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԼԷՔՍԵԱՆ ԱԶԻԶԵԱՆԻ մահվան մասին, խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեան հանդէս իրանց սեփական տանից, նախկին Զալաբովի տուն, Սօլոլակեան փողոց, № 12, դէպի Զգրաշէնի եկեղեցին, երեքշաբթի օր, մարտի 6-ին, առաւօտեան 10 ժամին։

Բժիշկ Աւետիք Բաբայեան (Բաբայեվ) ընդունում է հիւանդներին Թիֆլիսի բժշկանոցում չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ջղային և հոգեկան հիւանդութիւններ բժշկելու։ Բացի այդ բժիշկ Բաբայեան (Բաբայեվ) հինգշաբթի և շաբաթ օրերը առաւօտեան 9—10 ժամը ընդունում է իր տանը ներքին հիւանդութիւններ ունեցող կամ էլեկտրականութեամբ բժշկելի աղքատ հիւանդներին։ Հասցէն Սերգիեվսկայա փողոց, տուն Բայանդուրովի։

5—10

ԼԱՐՇԷԻ խանութում Գօլովինսկի հրապարակի վրա № 11 ծախվում են ամեն տեսակ թէ պարտիզային և թէ ծաղիկների ՍԵՐՄԵՐ, որոնք նոր են ստացված և բոլորովին թարմ են։

3—10

Въ Кукахъ, на Исарловской улицѣ въ домѣ № 9 ОТДАЕТСЯ ОДНА БОЛЬШАЯ СВѢТЛАЯ КОМНАТА съ отопленіемъ и прислугой. спросить въ редакціи «МШАКЪ»

ԿՈՒԿԻԱՑՈՒՄ, Իսարլօվսկայա փողոցի վրա № 9 տան մէջ քրէհով է տրվում մի ՄԵԾ ԼՈՒՍԱՒՈՐ ՍԵՆԵԱԿ ՎԱՌԵԼԻՔՈՎ և ծառայով։ Հարցնել «Մշակի» խմբագրատանը։

1—10

ՄԱՐՏԻ 6. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ. 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(Մարտի 5-ին)

	Ռ.	Կ.
Ոսկին (պոլուիմպերիալը	8	58
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ	500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	240	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան առմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	229	—
Մարսելի կուրսը 248—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	105	19
Վենայի կուրսը ածէ 113 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	60
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	30
» միւս տեսակը.	7	20
» չաքար աւազը.	5	40
» տրանզիտը. .	6	20
» մաքսը վճարած	12	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	7	60
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը թուշի . . .	7	50
» թարաքամի .	4	20
Աւիւրը Շորագալու .	1	70
» Երևանի. . .	—	—
Գարին	1	—
Մոմը բնաճարպի (стеар.)	12	60
Մետաքսը Նուխվայ . .	200	—
Կախեթունը. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	27	—
» լիանի . . .	22	—
» Մարտինկօյին	18	

ՀԵՌԱԳԻՐ

	Ռ.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ
(Վէրայի վրա № 38)

Մանկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանօվ։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ տառաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	
	առաւօտ.	
Փօթիից . .	9. 13	
Ռիօն . . .	12. 13	
Միխայլօվօ. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4. 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի	12. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7. Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելոկուչի տրակտից երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	Կոպ.
Բաց նամակ արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	47

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Բակստ վենէրական և կաշու հ., Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակստ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէյլիս աչքի հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բակստ վենէրական և կաշու հ.։

Հինգշաբթի. Վէրմիչէվ ներքին հ., Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների։

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիչէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակստ վենէրականկաշու հ., Բէյլիս աչքի հիւանդութիւններից

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԹԻՖԼԻՍ. Գ. Պապեան. Ձեզ համար մի նամակ կայ խմբագրատան մէջ։

—ԹԻՖԼԻՍ. Ս. Դուք իրաւունք կունենայիք պախարակել պարոնին, եթէ նա մշտապէս անհոգութեամբ կատարէր իր գործը։ Մէկ կամ երկու անգամ մի քանի տարիների ընթացքում ամեն մարդ կարող է սխալվել։ Գիտէք վրացու առածը. «Եթէ խելօք մարդը չը սխալվի, գիժը սարից վայր կընկնի»։

— ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. Բ. Այսպիսի բովանդակութեան նամակ մենք դեռ չենք ստացել։

—ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍ. Մելիքզադէ. Հետեւեալ համարից կը սկսենք ձեր յօդուածի տպագրութիւնը։ Մինչև այժմ անկարող էինք տպել։

Дозволено Цензурою 5 Марта 1879 г. Тифлисъ Տպարան Ց. Մարտիրոսեանցի Типографія Мартиресіанца